



Իսրայելի հույսը

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն և Քույր Վենդի Վ. Նելսոն

Քույր Նելսոնը և ես իսկապես շատ ուրախ ենք այս երեկո լինելու ձեզ հետ: Մեզ դուր է գալիս գտնվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու երիտասարդների, ուսուցիչների ու ծնողների միջավայրում:

Կցանկանալիք լսել բոլորիդ կարծիքներն այն մասին, թե ինչպես եք պատրաստվել մեր համաշխարհային հավաքին, ինչպես եք ամեն օր կարդացել Մորմոնի Գիրքը և աղոթել, որպեսզի կարողանաք լսել, թե ի՞նչ է Տերը ցանկանում ուսուցանել ձեզ:

Կրկին անգամ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել սեմինարիայի երգչախմբին, ով այդպիսի զգացմունքային կատարեց մեր բացիչ օրհներգը: «Փառք Քեզ Տեր Մարգարեի համար» օրհներգի խոսքերը մեր սրտերը դարձրեցին դեպի Մարգարե Ջոզեֆ Մոյսի: Որքա՜ն պարտական ենք մենք նրան: Նա *իրոք* այս վերջին տնտեսության մարգարեն է: Կարո՞ղ եք պատկերացնել: Նա ձեր տարիքակիցն էր, երբ ոգեշնչվեց Հակոբոս առաքյալի խոսքերից. «Եթե մեկը ձեզանից իմաստութեան պակասություն ունի, թող խնդրէ Աստուածանից»:¹

Այդ խոսքերը ստիպեցին երիտասարդ Ջոզեֆին գնալ մոտակա ծառերի պուրակ, որտեղ նա իր սիրտը դուրս թափեց Աստծուն:

Երկինքները բացվեցին: Ջոզեֆը տեսավ Հորը և Որդուն և իմացավ, թե որտեղ փնտրի իր հարցերի պատասխանները:

Այժմ, ես խնդրում եմ, որ բոլորդ վարվեք դեռահաս Ջոզեֆի նման: Աղոթքի միջոցով ձեր հարցերն ուղղեք անմիջապես Երկնային Հորը: Հիսուս Քրիստոսի անունով խնդրեք, որ Նա առաջնորդի ձեզ: Դուք ինքներդ կարող եք իմանալ, հենց այս ձեր տարիքում, թե ինչպես ստանալ անձնական հայտնություն: Եվ դրանից բացի, ուրիշ ոչինչ չի կարող այդքան փոխել ձեր կյանքը:

Ես խոստանում եմ *ձեզ*, ոչ թե ձեր կողքին նստածին, այլ՝ *ձեզ*, որ աշխարհի որ մասում էլ գտնվեք, ձեր դարձի որ փուլում էլ գտնվեք, նույնիսկ, եթե այս պահին կենտրոնացած չեք ուղու *վրա*, ես խոստանում եմ, որ եթե դուք անկեղծորեն և հաստատակամորեն կատարեք այն հոգևոր աշխատանքը, որն անհրաժեշտ է Սուրբ Հոգու հուշումները լսելու այդ վճռական և հոգևոր հմտությունը ձեռք բերելու համար, դուք կունենաք *ուր* ուղորդումը, որն անհրաժեշտ կլինի ձեր կյանքում: Դուք կստանաք ձեր հարցերի պատասխանները Տիրոջ ուրույն ձևով և Նրա ուրույն ժամանակին: Եվ չմոռանաք ձեր ծնողների ու Եկեղեցու ղեկավարների խորհուրդները: Նրանք նույնպես հայտնություն են ստանում ձեզ համար:

Երբ դուք իմանում եք, որ ձեր կյանքը դեկավարվում է Աստծո կողմից, անկախ մարտահրավերներից և հիասթափություններից, որոնք կարող են գալ և կզան, դուք կզգաք ուրախություն և խաղաղություն:

Այժմ, մենք կցանկանայինք ձեզ հետ խոսել Երկրի վրայի *մեծագույն* մարտահրավերի, *մեծագույն*

նպատակի, և *մեծագույն* աշխատանքի մասին: Եվ ցանկանում ենք հրավիրել, որ *դուք* կազմեք դրա մասը:

Ես խնդրել եմ Քույր Վենդի Նելսոնին որոշ ենթատեքստ տրամադրել այդ կարևոր ուղերձի համար: Խնդրեմ, քույր Նելսոն:

Քույր Վենդի Կ. Նելսոն

Միտելի եղբայրներ և քույրեր, ում մենք սիրում և հավատում ենք, կցանկանայի պատմել ձեզ, թե ամուսինս և ես ինչ ենք տեսել մի օր, երբ ամենագնաց մեքենայով շրջում էինք Յուտայի բլուրներով:

Աշնանային գեղեցիկ օր էր: Մեզ դուր էր գալիս ծառերի միջավայրը, որոնք ոսկեգույն և հոյակապ էին, բարձրահասակ և ուղիղ էին, և որոնք հասնում էին երկինք:

Սպա, մենք շրջադարձ կատարեցինք և ես տեսա մի ծառ, որը հիշեցրեց իմ մասին և թե ինչպես եմ ես հաճախ ինձ զգում:

Ձեզ ծանոթ է այդ զգացումը: Նայում եք ձեր շուրջը և տեսնում, որ բոլորը բարձրահասակ և ուղիղ են ու այսպես ասած, հասնում են երկինք:

Նրանք ամեն ինչ ունեն: Նրանք հագնում են գեղեցիկ հագուստներ, թվում է, խոսքերը միշտ տեղին են օգտագործում, խնդիրներ չունեն, կատարյալ հնազանդ են, և կարծես, երբեք չեն սխալվել իրենց կյանքում:

Դե, իսկ հետո դուք եք և ես եմ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ժամանակն է դադարել համեմատվել ուրիշների հետ: Ժամանակն է մի կողմ դնել մեր և ուրիշների այդ սխալ տեսակետները: Ճշմարտությունն այն է, որ մենք այդքան էլ անհավատալիորեն թերի չենք, ինչպես կարծում ենք, և մյուսներն այդքան էլ կատարյալ չեն, ինչպես կարող է թվալ, բացառությամբ, իհարկե, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից:

Միակ բանը, որն իսկապես կարևոր է, այն է, որ դուք և ես ճշգրտորեն կատարենք մեր պարտավորությունը, նույնիսկ, մեր Երկնային Հոր հետ նախատերկրային կյանքում ովստած պարտավորությունը, որ *կյատարենք* այստեղ՝ Երկրի վրա:

Այսպիսով, թույլ տվեք հարցնել. *Fligh*՞ համար եք դուք ծնվել:

Շատ կցանկանայի, որ դուք կարողանայիք 10 րոպեանոց տեսանյութ դիտել YouTube-ում ձեր նախատերկրային կյանքի մասին:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ եթե դուք կարողանայիք հինգ րոպե նայել երկնքին, ապա ավելի շատ կիմանայիք թեմայի մասին, քան եթե ուսումնասիրեիք այն ձեր ողջ կյանքի ընթացքում:² Պարզապես պատկերացրեք, եթե կարողանայիք 10 րոպե նայել ձեր նախատերկրային կյանքին:

Իհարկե, մենք գիտակցում ենք, որ Տերը իմաստուն կերպով վարագույրով ծածկել է այդ հիշողությունները: Սակայն, մի պահ պատկերացրեք ներկայիս ձեր կյանքը, եթե թույլ տային 10 րոպե դիտել ձեր նախատերկրային կյանքը:

Ես համոզված եմ, որ եթե դուք տեսնեիք, որ ապրում եք ձեր Երկնային ծնողների և Հիսուս Քրիստոսի հետ, եթե կարողանայիք տեսնել նախատերկրային կյանքի ձեր գործերը և ձեր ստանձնած պարտավորությունները, նույնիսկ ուրիշների հետ կապած ձեր պարտավորությունները, այդ թվում՝ ձեր մենթորների և ուսուցիչների հետ, եթե տեսնեիք ձեզ խիզախաբար արձագանքելիս ճշմարտության դեմ հարձակումներին և արիաբար պաշտպանելիս Հիսուս Քրիստոսին, ես հավատում եմ, որ ձեզանից յուրաքանչյուր կունե-

նար ավելի մեծ ուժ, ավելի մեծ պարտավորություն և հավերժական հեռանկար, որը կօգնե՞ր ձեզ հաղթահարելու ձեր *ցանկացած* և *բոլոր* շփոթությունները, կասկածները, մաքառումները և խնդիրները: *Բողոք:*

Ես հավատում եմ, որ եթե դուք հիշե՞իք, թե ում պետք է օգնե՞իք այստեղ երկրի վրա, կամ ինչ վիատեցնող փորձությունների միջոց է՞իք պատրաստ անցնելու, որ *որքան էլ* ծանր իրավիճակում գտնվե՞ք ներկայումս կամ ապագայում, դուք կասե՞իք. «Օ՛հ, այժմ ես հիշում եմ: Այժմ, ես հասկանում եմ: Այս դժվարին իրավիճակը հասկանալի է ինձ: Տիրոջ օգնությամբ ես կարող եմ դա անել»:

Այժմ, ձեզ հրավիրում եմ մտածել մեկ այլ հարցի շուրջ: Ուզում եմ պատկերացնե՞նք, որ մեզանից յուրաքանչյուրը երկիր է եկել, «Ի՞նչ պետք է անել երկրի վրա» վերնագրով մեր հոգիներին կցված ցուցակով:

Եկեք խոսենք, թե ինչ կարող է լինել այդ ցուցակում: Եկենք խոսենք այն հինգ սկզբունքների մասին, որոնք ըստ Հիսուս Քրիստոսի ավետարանի անկապակած պետք է գրված լինեն ցուցակում:

Առաջինը, դուք եկել եք ստանալու մահկանացու մարմին: Իսկ դա իմ ընկերներ, շատ մեծ բան է:

Երկրորդը, դուք եկել եք փորձվելու:

Ի դեպ, դուք նկատել եք, որ սովորաբար փորձվելիս մենք սովորում ենք վերահսկել մեր մարմինների ախորժակը և կրքերը, որոնք երբեմն կարող են դուրս գալ վերահսկողությունից: Եթե ներկայումս մաքառում եք ցանկացած կախվածության կամ չապաշխարած մեծ մեղքի մնացորդային ազդեցությունների հետ, ես կոչ եմ անում ձեզ բեռնաթափվել և այսօր զրուցել ձեր եպիսկոպոսի հետ: Նա կրում է քահանայության բանալիները, որոնք կարող են օգնել ձեզ:

Երրորդ գործողությունը, որ պետք է անեք երկրի վրա գտնվելիս՝ Հիսուս Քրիստոսին հետևելն ու Նրան պաշտպանելն է, ինչպես դուք արեցիք նախաերկրային կյանքում:

Չորրորդը, ամեն օր ապաշխարեք և ամեն շաբաթ ճաշակեք հաղորդությունը: Երբ դուք այդպես վարվեք, դուք հոգևորապես կբժշկվեք, կամրապնդվեք և կմեծարվեք, և ի վերջո, կարբագործվեք և կբարձրացվեք Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Այժմ, ձեր ցուցակի հինգերորդ կետը. գտեք և իրագործեք ձեր առաքելությունը: Իմ սիրելի ընկերներ, նախաերկրային կյանքում ձեզ և ինձ տրվել է հրաշալի առաքելություններ, որոնք մենք պետք է կատարե՞ինք այս երկրի վրա:

Մենք հնարավորություն ունենք իրագործելու մեր մահկանացու առաքելությունը, բայց մենք *պարտավոր* չենք դա անել: Ոչ-ոք չի *ստիպվի* մեզ: Մենք ազատ ենք ընտրելու, թե ինչպես ծախսենք մեր ժամանակը, եռանդը, մեր տաղանդներն ու միջոցները: Ի դեպ, այն *ինչ* մենք ընտրում ենք, իրականում, մեր փորձվելու մասն է կազմում:

Ընտրությունը ձերն է ու իմն է: Կնայաընտրե՞նք անել *այն ամենը*, ինչ պահանջվում է այդ հրաշալի առաքելություններն իրագործելու համար, որի համար ուղարկվել ենք երկիր:

Մինչ մտածում եք այդ հարցի շուրջ, եկեք փոխենք թեման և խոսենք, թե ինչո՞ւ եք դուք գտնվում երկրի վրա *այս հաստուկ ժախնասկ*, որը երկրի պատմության մեջ եզակի ժամանակ է:

Ինչո՞ւ եք դուք այս պահին այստեղ՝ երկրի վրա:

Ինչո՞ւ չեք ծնվել 1880 ականներին, կամ 30 տարի առաջ:

Թույլ տվեք պատմել ձեզ մի փորձառության մասին, որը ինձ սովորեցրեց այն պատմական օրերի մասին, որտեղ մենք ապրում ենք:

Մենք հաճախ խոսում ենք, որ ապրում ենք վերջին օրերում: Ի վերջո, մենք Վերջին օրերի սրբեր ենք: Բայց, գուցե, այդ օրերն ավելի «վերջին» են, քան մենք երբևէ կարող էինք պատկերացնել:

Այդ ճշմարտությունն ինձ համար իրականություն դարձավ այն փորձառության շնորհիվ, որը ես ունեցա 24 ժամվա ընթացքում, որը տեղի ունեցավ 2013

թվականի հունիսի 15-ին: Ամուսինս և ես գտնվում էինք Մոսկվայում, Ռուսաստանում:

Մինչդեռ Նախագահ Նելսոնը հանդիպում էր քահանայության ղեկավարների հետ, ես պատիվ ունեցա հանդիպելու շուրջ հարյուր քույրերի հետ: Ես *սիրում եմ* Ռուսաստանի մեր քույրերին: Նրանք տպավորիչ են:

Երբ ելույթ ունենալու համար մոտեցա բեմին, ես զգացի, որ ասում եմ մի բան, որը նախկինում երբեք չէի ասի: Ես ասացի կանանց. «Ես կցանկանայի ծանոթանալ ձեզ հետ ըստ ձեր ազգատոհմի: Խնդրում եմ, ոտքի կանգնել որպես Իսրայելի ցեղ, որը խորհրդանշում է ձեր հայրապետական օրհնության մեջ նշված ազգատոհմը»:

«Բենիամին»։ Մի քանի կանայք կանգնեցին:

«Դա՞ն»։ Մի քանիսն էլ կանգնեցին:

«Ռուբեն»։ Մի քանիսն էլ կանգնեցին:

«Նեփթաղիմ»։ Ավելի շատ կանայք կանգնեցին:

Երբ Իսրայելի տասներկու ցեղերի անունները հայտարարվեց, Սսերից մինչև Զաբուդուն, և կանայք կանգնեցին, մենք բոլորս զարմացանք այդ տեսարանով, մեր զգացմունքներով և մեր սովորածով:

Ձեր կարծիքով, այդ շաբաթ Մոսկվայում հավաքված 100-ից քիչ կանանց շարքում Իսրայելի ցեղերից քանի՞սն էին ներկայացված:

Տասնմեկ: Իսրայելի տասներկու ցեղերից տասնմեկը ներկայացված էին այդ մեկ սենյակում: Միակ բացակա ցեղը Ղևիի ցեղն էր: Ես ապշել էի: Դա ինձ համար հոգևոր զարգացման պահ էր:

Այդ հավաքներից անմիջապես հետո ամուսինս և ես անմիջապես մեկնեցինք Երևան: Ինքնաթիռից դուրս

զալուց հետո առաջին մարդիկ, որոնց մենք հանդիպեցինք, միսիայի նախագահն ու նրա կինն էր: Ինչոր կերպ նա լսել էր Մոսկվայի այս դեպքի մասին և մեծ ուրախությամբ ասաց. «Ես Ղևիի ցեղից եմ»:

Պարզապես պատկերացրեք մեր սարսուռը, երբ ամուսինս ու ես հաջորդ օրը հանդիպեցինք միսիոներներին, որոնց մեջ էր Ղևիի ցեղից մի երեց, ով պարզվեց Գիլբերտ, Արիզոնայից էր:

Երբ փոքր ժամանակ հաճախում էի Կանադայի Ալբերտա նահանգի Ռեյմոնդի Երեխաների միությունը, ես սովորեցի, որ վերջին օրերին, Փրկիչի Երկրորդ Գալուստից առաջ, Իսրայելի տասներկու ցեղերը կհավաքվեն: Այդ ճշմարտությունը ցնցող էր ինձ համար և միևնույն ժամանակ բավականին անհասկանալի: Այսպիսով, պատկերացրեք այն զգացումը, որը ես ապրեցի՝ հանդիպելով Իսրայելի տասներկու ցեղերին ընդամենը 24 ժամվա ընթացքում:

Այդ օրվանից հետո ես հասկացա, որ հավանաբար, չպետք է խնդրեի այդ քույրերին բացահայտել իրենց ազգատոհմը, քանի որ հայրապետական օրհնությունները սուրբ են և դրանց մեջ հայտարարված ազգատոհմը անձնական է: Այնուամենայնիվ, ես շատ շնորհակալ եմ այն արտոնության համար, որ ես անհատապես տեսա Իսրայելը հավաքվելու պտուղները: Այդ փորձառության հիշողությունը երբեք չի խամրել իմ սրտում կամ մտքում:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, իսկապես, սրանք վերջին օրերն են: Աշխարհի պատմության մեջ *երբեք* այսպիսի ժամանակ չի եղել: Երբե՛ք: Նախաերկրային կյանքում դուք և ես պարտավորվել ենք մեծ աշխատանք կատարել այստեղ՝ Երկրի վրա: Եվ Տիրոջ օգնությամբ մենք կկատարենք դա: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, սրանք *իսկապես* վերջին օրերն են և Տերն արագացնում է Իսրայելը հավաքելու Իր աշխատանքը: Այդ հավաքն ամե-

Նախագահ Նելսոն

Շնորհակալություն, Վենդի: Ես սիրում եմ քեզ: Արդյո՞ք նա հրաշալի չէ:

նակարևոր գործն է, որն այսօր տեղի է ունենում Երկրի վրա: Ոչինչ չի կարելի համեմատել այդ գործի մեծության, կարևորության և վսեմության հետ: Եվ եթե դուք որոշեք, եթե դուք ցանկանաք, դուք կարող եք կազմել դրա մասը: Դուք կարող եք դառնալ մի մեծ ու փառահեղ գործի կարևոր մասը:

Երբ խոսում ենք *հախաքման* մասին, մենք պարզապես հաստատում ենք այս հիմնական ճշմարտությունը. վարագույրի երկու կողմերում գտնվող Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրն արժանի է լսելու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը: Նրանք են որոշում, թե արդյո՞ք ցանկանում են ավելին իմանալ:

Այն մարդիկ, որոնց ծագումն Իսրայելի տարբեր ցեղերից է, նրանք են, ում սրտերը հավանաբար կդառնան Տերը: Նա ասել է. «Իմ ոչխարները իմ ձայնին կլսեն և ես ճանաչում եմ նրանց և նրանք իմ ետևից են գալիս»:³ Նրանք, ովքեր Իսրայելի տնից են, ավելի հեշտ կընդունեն Տեր Հիսուս Քրիստոսին որպես իրենց Փրկիչ և կցանկանան հավաքվել Նրա հոտի մեջ: Նրանք կցանկանան դառնալ Նրա Եկեղեցու անդամները, ովստեր կապել Նրա և Երկնային Հոր հետ և ստանալ իրենց կարևոր արարողությունները:

Տերն ասել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ այժմ, նկատի ունի վերջին օրերը, տասնամեկերորդ ժամն է և վերջին անգամն է, որ Նա մշակներ կկանչի Իր այգին և դա այն նպատակով, որ հավաքի ընտրյալներին երկրի չորս կողմերից:⁴

12-18 տարեկան բոլոր մարդկանց այս երեկո ուղղված իմ ուղերձը հետևյալն է. Արդյո՞ք կցանկանայիք կարևոր մասը կազմել երկրի վրայի *մեծագույն* մարտահրավերի, *մեծագույն* նպատակի, և *մեծագույն* աշխատանքի:

Արդյո՞ք կցանկանայիք օգնել, որպեսզի այս թանկագին վերջին օրերում հավաքեինք Իսրայելը: Արդյո՞ք դուք, ընտրյալներդ, կցանկանայիք օգնել գտնելու ընտրյալներին, ովքեր չեն լսել վերականգնված ավետարանի ուղերձը: Արդյո՞ք կցանկանայիք լինել այն «արագընթաց սուրհանդակների» թվում, որոնց մասին Եսայիա մարգարեն խոսել է:⁵

Այժմ, Իսրայելի հավաքմանը մասնակցելիս ձեզանից կպահանջվի որոշ զոհաբերություն: Միգուցե, դրա համար ձեր կյանքում որոշ փոփոխություններ պահանջվի կատարել: Այն անշուշտ կպահանջի ձեր ժամանակն ու եռանդը և Աստուծուց տված ձեր տաղանդները: Դուք հետաքրքրվա՞ծ եք:

Պարզապես մտածեք այդ ամենի հուզումնալից պահի և հրատապության մասին. Աղամին հաջորդող բոլոր մարգարեները տեսել են մեր օրերը: Եվ բոլոր մարգարեները խոսել են *մեյր* օրերի մասին, երբ Իսրայելը կհավաքվի և Երկիրը կպատրաստվի Փրկիչի Երկրորդ Գալուստին: Մտածեք այդ մասին: Երկիր մոլորակի վրա երբևէ ապրած բոլոր մարդկանց մեջ *մեյր* ենք այն մարդիկ, ովքեր պետք է մասնակցեն այս վերջին ու մեծ հավաքման իրադարձությանը: Որքա՞ն ոգևորիչ է դա:

Մեր Երկնային Հայրն այս վերջին փուլի համար պահպանել է Իր ամենաազնվաբարո հոգիներին, հավանաբար, ես կարող եմ ասել Իր լավագույն թիմին: Այդ ազնվաբարո հոգիները, այդ լավագույն խաղացողները, այդ հերոսները՝ *դոմբ* եք:

Ես վկայում եմ, որ հավաքումը հիմա է և այն իրական է: Այն տարի, երբ ես ծնվեցի, Եկեղեցու անդամների ընդհանուր թիվը 600,000 պակաս էր և անդամներ չկային Հարավային Ամերիկայում: Այսօր, աշխարհում կան 16 միլիոնից ավել անդամներ, որից 3 միլիոնը Հարավային Ամերիկայի անդամներն են:

Թույլ տվեք պատմել 1979 թվականին տեղի ունեցած մի դեպքի մասին: Այդ ժամանակ ես ծառայում էի Կիրակնօրյա Դպրոցի գերագույն Նախագահ: Ինձ հրավիրեցին մասնակցել Եկեղեցու ղեկավարների մի ժողովի, որտեղ Եկեղեցու Նախագահ՝ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն էր ելույթ ունենում: Նա մեզ պատվիրեց աղոթել, որպեսզի ազգերի դռները բացվեն և Հիսուս Քրիստոսի ավետարանը կարողանան հասցնել Երկրի վրայի բոլոր մարդկանց: Նա մասնավորապես նշեց Չինաստանը և խնդրեց, որ մենք աղոթենք Չինաստանի ժողովրդի համար: Նա նաև ասաց. «Մենք պետք է ծառայենք Չինաստանի ժողովրդին: Մենք պետք է սովորենք նրանց լեզուն:

Մենք պետք է աղոթենք նրանց համար և օգնենք նրանց»:

Ես վերադարձա տուն կնոջս, Դանցելի, մոտ (ով ավելի քան 13 տարի առաջ մահացել է) և ասացի նրան. «Այդ ժողովի ժամանակ Նախագահ Քիմբալը խնդրեց մեզ չինարեն սովորել: Իսկ ես *չեմ* լսել, որ նա ասի «Բոլորդ, բացի Եղբայր Նելսոնից»: Այսպիսով, կցանկանայի՞ր ինձ հետ միասին սովորել մանրարին չինարեն լեզուն»: Իհարկե, նա համաձայնվեց և մենք վարձեցինք մանդարին լեզվի ուսուցիչ:

Նախագահ Քիմբալի կոչից վեց շաբաթ անց ես ներկա էի թորակալ վիրաբուժության ամերիկյան ասոցիացիայի ամենամյա հանդիպմանը: Այն անցկացվում էր Բոստոնում, Մասաչուսեթսում: Այդ առավոտ ես հյուրանոցի իմ սենյակում աղոթեցի Չինաստանի ժողովրդի մասի, ինչպես խնդրել էր Նախագահ Քիմբալը: Ես գնացի օրվա առաջին հանդիպմանը և նստեցի այնտեղ, որտեղ միշտ նստում էի այդ մասնագիտական հանդիպումների ժամանակ՝ սենյակի առաջին շարքում: Մակայն, ժողովը սկսելուց հետո ես գնալով անհարմար էի զգում աթոռին նստած: Երբ լույսերն անջատեցին սլայդների ցուցադրության համար, ես դանդաղ փոխեցի աթոռս ու լուռ տեղափոխվեցի սենյակի հետին շարքերը՝ մի շարք, որտեղ սովորաբար երբեք չէի նստի: Երբ լույսերը միացրեցին, ես պարզեցի, որ նստել էի չինացի մի բժիշկի կողքին: Նա ներկայացավ որպես Պրոֆեսոր Վու Յին-Կայ (Պեկին, Չինաստան):

Նրա հետ հաճելի զրույցից հետո ես հրավիրեցի նրան այցելել Սոլթ Լեյք Սիթի և դասախոսություն կարդալ Յուտայի բժշկական համալսարանում: Նա ուրախությամբ ընդունեց և բացառապես լավ կարգաց դասախոսությունը: Ապա նա վերադարձավ Չինաստան:

Այդ դեպքից շատ չանցած, նա ինձ հրավիրեց Չինաստանի Մինան քաղաքի Շանդոնգ բժշկական համալսարանում աշխատել որպես վիրաբուժության այցելու պրոֆեսոր: Դա հանգեցրեց հետագա հրավերների, որտեղ ես ծառայեցի Չինաստանի ևս երկու համալսարաններում որպես վիրաբուժության այցելու պրոֆեսոր:

Մասնագիտական այդ հրաշալի փորձառությունները, նախքան իմ տասներկուսի քվորում կանչվելը, իրենց գազաթնակետին հասան, երբ չինացի վիրաբույժները խնդրեցին ինձ բաց սրտի վիրահատություն իրականացնել և փրկել իրենց ամենահայտնի օպերային աստղի կյանքը: Ես կատարեցի այդ վիրահատությունը և բարեբախտաբար վիրահատությունը հաջող անցավ: Ի դեպ, դա իմ մասնագիտական կյանքի վերջին վիրահատությունն էր:

Արդեն գրեթե 40 տարի է ես աղոթում եմ Չինաստանի ժողովրդի համար: Ես ուրախանում եմ Չինաստանի բժշկական գործընկերների և այլ սիրելի ընկերների հետ ունեցած իմ ընկերությամբ: Այժմ, ինձ համար մեծ ուրախություն է, որ պաշտոնապես նշանակվել եմ «Չինաստանի հին բարեկամ» կոչմանը:

Իմ վկայությունն է, որ երբ մենք կատարում ենք *ինչ էլ որ* Աստծո մարգարեն խնդրի մեզանից, ճանապարհը կհարթվի և կյանքերը կփոխվեն:

Այժմ, հույսով եմ, որ հարցնում եք ինքներդ ձեզ. «Ի՞նչ կարող եմ որպես դեռահաս անել, որպեսզի օգնեմ հավաքել Իսրայելը»: Դե, Քույր Նելսոն և ես այդ նույն հարցը և ուրիշ մի քանի հարց ևս տվել ենք 12-18 տարեկան երիտասարդների խմբին, որոնցից շատերն այս երեկո ներկա են:

Մենք սկզբում հարցրեցինք. «Ի՞նչ է Իսրայելի հավաքումը: Եվ, ի՞նչ է այն նշանակում քեզ համար: Նրանց պատասխանները տարբեր էին, բայց մեծամասնությունը նշեց, որ նրանք այնքան էլ համոզված չեն, թե ինչ է դա նշանակում: Այս երեկո, մենք ուզում ենք, որ դուք իմանաք, որ Իսրայելի հավաքումն, ի վերջո, նշանակում է՝ առաջարկել Հիսուս Քրիստոսի ավետարանը վարագույրի երկու կողմերում գտնվող Աստծո այն զավակներին, ովքեր Աստծո հետ չեն կապել կարևոր ուխտերը և ոչ էլ ստացել են իրենց հիմնական արարողությունները:

Մեր Երկնային Հոր յուրաքանչյուր զավակ արժանի է կատարելու Հիսուս Քրիստոսին հետևելու *ընտրությունը*, Նրա ավետարանն ընդունելու և ստանալու հնարավորությունը դրա բոլոր օրհնություններով հանդերձ. այո՛, բոլոր այն օրհնությունները, որոնք Աստված խոստացել է Աբրահամի, Իսահակի և

Հակոբի տոհմին, ով ինչպես գիտեք, նաև հայտնի է Իսրայել անվամբ:

Իմ սիրելի արտասովոր երիտասարդություն, դուք ուղարկվել եք Երկիր այս ճշգրիտ ժամանակահատվածում՝ աշխարհի պատմության ամենավճահատվածում, որպեսզի օգնեք Իսրայելի հավաքմանը: Այս պահին, այս Երկրում *ոչինչ* չի կատարվում, որն ավելի կարևոր է, քան դա: *Ոչինչ* ավելի մեծ հետևանք չունի, քան դա: Բացարձակապես *ոչինչ*:

Այս հավաքը պետք է *ամեն ինչ* նշանակի ձեզ համար: Մա է այն առաքելությունը, որի համար ուղարկվել եք Երկիր:

Այսպիսով, ձեզ հարց եմ տալիս «Արդյո՞ք պատրաստ եք ընդգրկվելու Իսրայելը հավաքելու Տիրոջ երիտասարդների գումարտակի մեջ»: Խնդրում եմ, մտածեք այդ մասին: Հարկավոր չէ հիմա պատասխանել:

Եկեք վերադառնանք այլ հարցերին, որոնք Քույր Նելսոնն ու ես տվեցինք մեր երիտասարդ ընկերներին: Մենք հարցրեցինք. «Եթե մարգարեն հրավիրեր Եկեղեցու բոլոր 12-18 տարեկան մարդկանց ընդգրկվելու Իսրայելը հավաքելու ջանքերին, ինչպե՞ս կվարվեիք դուք»:

Երիտասարդներն արձագանքեցին ոգեշնչող մեկնաբանություններով, ինչպիսիք են՝ «Եթե մարգարեն խնդրեր մեզ ընդգրկվել և մասնակցել Իսրայելը հավաքելու գործին, ես *անսպասելի* կմասնակցեի դրան»: Մեկ ուրիշն ասաց. «Ես կթողնեի բոլոր իմ գործերը և կօգնեի»: Մեկ ուրիշը՝ «Ես կգնայի և կանեի *ինչ էլ որ* նա ինձ խնդրեր, քանի որ մարգարեն քարոզիչ է Աստծո կողմից»:

Նրանց պատասխանները ներառում էին նաև. «Ես կցանկանայի անել ընտանեկան պատմության ավելի շատ աշխատանք: Ես ավելի բաց կլինեի և մեծ ջանքեր կգործադրեի ավետարանի մասին ուրիշների հետ խոսելու համար: Ես Քրիստոսաման հատկանիշներով ապրելու լավ օրինակ ցույց կտայի: Մահացածների համար ավելի շատ մկրտություններ կկատարեի, կփոխեի կյանքիս և ընտրություններին տեսակետները, կգնայի այնտեղ, որտեղ

նա կցանկանար, կտվորեի նոր լեզու, կհանդիպեի նոր մարդկանց, կտրամադրեի Մորմոնի Գրքի իմ օրինակն այն մարդկանց, ովքեր երբեք չեն կարողացել այն: Եվ ես կլինեի ամենաբարի անձնավորությունը»:

Մենք նաև հարցրեցինք այդ երիտասարդությանը, թե ինչ են պատրաստ գոհաբերել, որպեսզի կարողանան օգնել և հավաքել Իսրայելը: Կրկին, երիտասարդները ցնցեցին մեզ: Նրանք պատասխանեցին. «Ես ավելի քիչ կմասնակցեմ սպորտի, որպեսզի օգնեմ ճշմարտության կարիք ունեցող մարդուն: Ես կգոհաբերեմ ընկերներին հետ ժամանակ անցկացնելը և դրա փոխարեն կիրավիրեմ նրանց տաճար: Ես, անկասկած, ավելի քիչ ժամանակ կտրամադրեմ հեռախոսիս: Ես կգոհաբերեմ հեռուստացույց դիտելը: [Նույնիսկ] պատրաստ եմ գոհաբերել կիրակնօրյա կեսօրվա քունը»:

Մենք հարցրեցինք. «Եթե ցանկանում եք միանալ և օգնել Իսրայելի հավաքմանը, ի՞նչ կսկսեիք կամ կդադարեիք անել: Նրանք հետևյալ պատասխանները տվեցին. «Ես ավելի ու ավելի շատ ու նպատակաուղղված կուսումնասիրեմ սուրբ գրությունները, որպեսզի կարողանամ պատասխանել մարդկանց հարցերին: Սոցիալական մեդիայում ավելի քիչ ժամանակ կանցկացնեմ ու ավելի շատ կընդգրկվեմ անդամ միսիոներական աշխատանքի պարզ գործողություններին, որոնց թվում են ամենօրյա ծառայությունները: Ես ավելի քիչ ժամանակ կանցկացնեմ հեռախոսով զբաղվելու համար, իսկ երբ հեռախոսով եմ զբաղված, ապա սուրբ գրությունների հատվածներ և այլ հոգևոր ուղերձներ կտեղադրեմ սոցիալական մեդիայում: Ես կուսումնասիրեմ գերագույն համաժողովների ելույթները, քանի որ նրանք անչափ կարևոր են: Ես առողջ սնունդ կօգտագործեմ, որպեսզի առողջ լինեմ: Ես կդադարեմ մտածել միայն իմ մասին»: Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր պատասխանների ու հարցերի համար:

Մտածեք այս մասին իմ սիրելի երիտասարդ եղբայրներ և քույրեր, հենց հիմա ես պատրաստվում եմ այն օրվան, երբ ինձանից կպահանջվի հաշվետվություն տալ Մարգարե Չոզեֆ Միֆթին, Նախագահ Բրիգամ Յանգին և ուրիշներին և, ի

վերջո Տիրոջը՝ այսօր Երկրի վրա Աստծո մարգարեն լինելու իմ կառավարման վերաբերյալ: Ես չեմ ուզում, որ ինձ հարցնեն. «Եղբայր Նելսոն, ինչո՞ւ չէիր երիտասարդներին ավելի հստակ բացատրում Իսրայելի հավաքման գործում *իրենց* դերի մասին: Ինչո՞ւ չէիր ավելի համարձակորեն ընդգրկում նրանց այդ գործում:

Այսպիսով, ես հրավիրում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 12-18 տարեկան *բոլոր* երիտասարդ կանանց և *բոլոր* երիտասարդ տղամարդկանց ընդգրկվել Իսրայելը հավաքելու Տիրոջ երիտասարդների գումարտակ:

Ի՞նչը կօգնի ձեզ: Երբ շարունակեք ամեն օր կարդալ Մորմոնի Գիրքը, դուք կսովորեք հավաքման վարդապետությունը,⁶ ճշմարտություններ՝ Հիսուս Քրիստոսի, Նրա քավության և Նրա ավետարանի լրիվության վերաբերյալ: Մորմոնի Գիրքը կարևոր է Իսրայելի հավաքի համար:⁷ Ի դեպ, եթե չլիներ Մորմոնի Գիրքը, Իսրայելի խոստացված հավաքումը տեղի չէր ունենա:

Եվ հիմա ես հրավիրում եմ ձեզ պատրաստ լինել անելու ևս հինգ բան, հինգ բան, որը կփոխի ձեզ և կօգնի փոխել աշխարհը:

Նախ, զերծ մնացեք սոցիալական մեղիայի անընդհատ կախվածությունից, որպեսզի դրա աշխարհիկ ազդեցությունը ձեզ վրա նվազ լինի:

Թույլ տվեք պատմել ձեզ տարիքակից երիտասարդի մասին, իմ սիրելի ընկերոջ թոռան մասին: Նա հայտնի է իր ընկերների շրջապատում և առաջնորդ է իր ավագ դպրոցում: Վերջերս նրա ծնողները նյութեր գտան նրա հեռախոսի մեջ, որոնք պատշաճ չէին Հիսուս Քրիստոսի հետևորդի համար: Նրանք պնդեցին, որ որոշ ժամանակ նա զերծ մնա սոցիալական մեղիայից: Նրանք փոխեցին նրա սմարթֆոնը հասարակ հեռախոսով և նա խուճապի մատնվեց: Ինչպե՞ս նա կապ կհաստատեր իր ընկերների հետ:

Սկզբում, նա զայրացած էր իր ծնողների վրա, բայց ընդամենը մի քանի օր անց նա շնորհակալություն հայտնեց նրանց իր սմարթֆոնը վերցնելու համար: Նա ասաց. «Ես երկար ժամանակ է առաջին անգամ ազատ եմ զգում»: Այժմ, նա իր հասարակ բջջային

հեռախոսով զանգահարում է նրանց ու կապ հաստատում այդ կերպ: Այժմ, նա տեքստային հաղորդագրություններ ուղարկելու փոխարեն խոսում է նրանց հետ:

Այս երիտասարդի կյանքում ի՞նչ այլ փոփոխություններ տեղի ունեցան: Նա ասում է, որ հիմա դուր է գալիս ազատ լինել այն կեղծ կյանքից, որը ստեղծում է սոցիալական մեղիան: Նա ակտիվորեն ապրում է կյանքով, ոչ թե ամբողջ ժամանակ գլուխը հեռախոսի վրա կախած է: Վիդեո խաղերի փոխարեն նա մասնակցում է բացօթյա հանգստյան միջոցառումներին: Իր տանը նա ավելի դրական է ու օգտակար: Նա ծառայելու հնարավորություններ է փնտրում: Նա ավելի ուշադիր է լսում եկեղեցում, ունի ավելի պայծառ դեմք, ավելի երջանիկ է և ակտիվորեն պատրաստվում է իր միսիային: Այդ ամեն նրա շնորհիվ, որ դադար տվեց սոցիալական մեղիայի բացասական ազդեցությունից:

Այսպիսով, իմ այսօրվա առաջին հրավերը սոցիալական մեղիայի մշտական կախվածությունից ազատվելն է՝ սոցիալական մեղիայի յոթօրյա ծով պահելու միջոցով: Ես գիտակցում եմ, որ սոցիալական մեղիայում կան դրական կողմեր: Բայց, եթե դուք ավելի շատ ուշադրություն դարձնեք սոցիալական մեղիայի թարմացվող բովանդակությանը, քան Հոգու հուշումներին, ապա դուք հոգևոր վտանգի առաջ եք կանգնեցնում ձեզ, ինչպես նաև՝ անընդհատ մենակ մնալու և ընկճախտի ռիսկի առաջ: Դուք և ես ճանաչում ենք երիտասարդների, որոնք սոցիալական մեղիայի ազդեցության տակ ասել և արել են այնպիսի քայլեր, որոնք նրանք երբեք չէին անի կամ ասի անձամբ: Մյուսներին հոգեպես ճնշելը օրինակներից մեկն է:

Սոցիալական մեղիայի մեկ այլ թերությունն այն է, որ այն ստեղծում է կեղծ իրականություն: Յուրաքանչյուրը ներկայացնում է իր ամենազվարճալի, արկածային և հետաքրքիր նկարները, որոնք ստեղծում են սխալ տպավորություն, որ բոլորը, բացի ձեզանից, ունեն զվարճալի, արկածային և հետաքրքիր կյանք: Տարբեր սոցիալական մեղիաների ձեր թարմացվող բովանդակության մեծ մասը

աղավաղված է, եթե ոչ կեղծ: Այսպիսով, յոթօրյա դադար տվեք կեղծիքից:

Ընտրեք իրար հաջորդող յոթ օր և իրագործեք դա: Տեսեք, թե արդյո՞ք այդ յոթ օրերի ընթացքում կնկատեք որևէ տարբերություն, թե ինչպես եք դուք զգում և ինչ եք մտածում և, նույնիսկ, թե *ինչպես* եք դուք մտածում: Յոթ օր հետո, ուշադրություն դարձրեք, արդյո՞ք կան որոշ բաներ, որոնք կցանկանաք դադարեցնել և որոշ բաներ, որոնք դուք այդ ժամանակ կցանկանաք սկսել:

Սոցիալական մեդիայի այդ ծումը կարող է պահվել միայն ձեր և Տիրոջ միջև: Դա կլինի ձեր նշանը Նրան, որ դուք պատրաստ եք հեռանալ աշխարհից՝ Իր երիտասարդների գումարտակի մեջ ընդգրկվելու համար:

Իմ երկրորդ հրավերն այն է, որ երեք շաբաթ անընդմեջ Տիրոջ համար շաբաթական զոհաբերություն կատարեք, որպեսզի Նա իմանա, որ ամենից առավել ցանկանում եք Նրա երիտասարդների գումարտակի մասը կազմել: Երեք շաբաթվա ընթացքում հրաժարվեք ձեր նախընտրած որևէ զբաղմունքից և օգտագործեք այդ ժամանակն Իսրայելը հավաքելու գործում:

Ցանկացած ժամանակ, երբ *ինչ-որ* բան եք անում վարագույրի երկու կողմերում գտնող *որևէ մեկին* օգնելու համար, մեկ քայլ առաջ եք գնում Աստծո հետ ուխտեր կապելու և նրանց մկրտության ու տաճարային կարևոր արարողությունների ուղղությամբ և օգնում եք հավաքել Իսրայելը: Դա այդքան պարզ է:

Երբ աղոթեք ժամանակի այդ զոհաբերության վերաբերյալ, դուք կուղղորդվեք և կիմանաք, թե ինչ կարող եք զոհաբերել այդ շաբաթը և փոխարենը ինչ կարող եք անել, որպեսզի օգնեք հավաքելու Իսրայելը: Օրինակ, մի երիտասարդ գոլֆ խաղացող կարող է հրաժարվել գոլֆի հերթական փուլից և այդ ժամանակն անցկացնել տաճարի մկրտարանում:

Իմ երրորդ հրավերն այն է, որ դուք կյանքի լիարժեք գնահատում կատարեք Տիրոջ և, հավանաբար, ձեր ծնողների և ձեր եպիսկոպոսի հետ, որպեսզի

համոզվեք, որ ամուր կանգնած եք ուխտյալ ուղու վրա: Եթե դու շեղվել ես, կամ եթե կան որոշ բաներ, որոնք անհրաժեշտ է մոռանալ, որպեսզի ձեր միջոցն ու սիրտն ավելի մաքուր լինեն, այսօր դա փոխելու կատարյալ ժամանակն է:

Եթե վստահ չեք, թե ինչպես ապաշխարել, խոսեք ձեր եպիսկոպոսի կամ ձեր ծնողների կամ երկրափի հետ: Նրանք կօգնեն ձեզ հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունը: Նրանք կօգնեն ձեզ զգալ այն ուրախությունը, որը *ճշմարիտ* ապաշխարությունը *միշտ* բերում է:

Խնդրում եմ, մեկ րոպե անգամ դուրս *չմնաք* ուխտյալ ուղուց: Խնդրում եմ, ճշմարիտ ապաշխարության շնորհիվ հենց հիմա հետ եկեք: Տիրոջ երիտասարդների գումարտակում դուք մեզ հիմա եք անհրաժեշտ: Առանց ձեզ այն կտարբերվի:

Իմ չորրորդ հրավերն այն է, որ դուք ամեն օր աղոթեք, որ Աստծո բոլոր զավակները կարողանան ստանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները: Դուք և ես ապրում ենք, որպեսզի տեսնենք շարունակելու ենք տեսնել, թե ինչպես է Իսրայելը մեծ ուժով հավաքվում: Եվ դուք կարող եք այդ հավաքի հետևում գտնվող ուժի մի մասը լինել:

Իմ հինգերորդ հրավերն այն է, որ դուք առանձնապես և տարբերվեք աշխարհից: Դուք և ես գիտենք, որ դու պետք է լույս լինեք աշխարհին: Հետևաբար, Տիրոջն անհրաժեշտ է, որ դուք նմանվեք, գործեք և հազնվեք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտի նման: Այո, դուք ապրում եք աշխարհում, բայց աշխարհից շատ տարբերվող չափանիշներ ունեք, որպեսզի խուսափեք աշխարհի բծերից:

Սուրբ Հոգին ունենալով ձեզ զուգրնկեր, դուք կարող եք տեսնել հենց այն հռչակավոր մշակույթի միջով, որը համակել է մեր հասարակությանը: Դուք կարող եք ավելի խելացի լինել, քան նախորդ սերունդները երբևէ եղել են: Իսկ եթե ձեզ երբեմն անվանել են «տարօրինակ», պատիվ համարեք այդ տարբերանշանը և երջանիկ եղեք, որ ձեր լույսը պայծառ փայլում է այս մշտախավար աշխարհում:

Չափանիշ սահմանեք մնացած աշխարհին: Ընդունեք, որ տարբեր եք: *Երիտասարդներին գորացնելու հասկար* գրքույկը պետք է լինի *ձեր* չափանիշը: Դա այն չափանիշն է, որը Տերն ակնկալում է, որ Իր բոլոր երիտասարդները կպահեն: Այժմ, լինելով Նրա խոնարհ ծառան, ես խնդրում եմ ձեզ կրկին ուսումնասիրել այդ գրքույկը: Աղոթքով կարդացեք այդ գրքույկն այնպես, կարծես առաջին անգամ եք կարդում: Նշումներ արեք այնտեղ: Զրուցեք դրա մասին: Քննարկեք չափանիշները ձեր ընկերների հետ: Որոշեք, թե ինչպես կարող եք ապրել ըստ այդ չափանիշների, իսկ ավելի ստույգ, ըստ *ձեր* չափանիշների:

Դուք ունեք այդ գրքույկի ձեր օրինակը: Այսպիսով, այս երեկո հանդիպումից հետո, եթե ցանկանում եք ընդգրկվել, խնդրում եմ վերցնել *Երիտասարդներին գորացնելու հասկար* գրքույկի մեկական օրինակ և դա տալ որևէ ընկերոջ, ով չգիտի չափանիշները կամ չի կիրառել այդ չափանիշները:

Աղոթեք, որպեսզի իմանաք, թե ով այդ գրքույկի կարիքն ունի: Դուք կառաջնորդվեք: Եվ դա ոգևորիչ կլինի:

Այժմ, թույլ տվեք ավարտել և վերանայել իմ հինգ հրավերները, որպեսզի ընդգրկվեք Տիրոջ երիտասարդների գումարտակը և օգնեք հավաքել Իսրայելը:

1. Մոցիալական մեդիայի յոթօրյա ծոմ պահեք:
2. Երեք շաբաթ շարունակ կատարեք ժամանակի շաբաթական զոհաբերություն Տիրոջ համար:
3. Մնացեք ուխտյալ ուղու վրա: Եթե դուրս եք մնացել, ապաշխարեք և հետ եկեք ուղու վրա:
4. Ամեն օր աղոթեք, որ Աստծո բոլոր զավակները կարողանան ստանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները:

5. Առանձնացեք: Տարբերվեք: Լույս եղեք: Ընկերոջը նվիրեք *Երիտասարդներին գորացնելու հասկար* գրքույկի մեկ օրինակ:

Իմ սիրելի երիտասարդ եղբայրներ և քույրեր, դուք լավագույններից մեկն եք, որ Տերը *կարև* ուղարկել է այս աշխարհ: Դուք կարող եք լինել ավելի խելացի և իմաստուն, և ունենաք ավելի մեծ ազդեցություն աշխարհի վրա, քան նախորդ սերունդները:

Ավարտելուց առաջ հրավիրում եմ ողջ աշխարհի երիտասարդներին ձեզ հետ միասին ոտքի կանգնել և զգալ այն ոգևորությունը, որը բխում է «Միոնի բանակում» Տիրոջ երիտասարդների գումարտակի անդամ լինելուց և երգել մեր փակման օրհներգը, «Իսրայելի հույսը», քանի որ այդ օրհներգը միանգամայն ձեր մասին է:

Իմ հոգու խորքից ես վկայում եմ, որ սա Ամենակարող Աստծո գործն է: Նա ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է, որը վերականգնվել է իրագործելու համար իր աստվածային ճակատագիրը, այդ թվում՝ Իսրայելի խոստացված հավաքումը:

Դուք *եք* Իսրայելի հույսը, «խոստացված օրվա զավակները»:⁸ Ես վկայում եմ այս մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Հղումներ

1. Հակոբոս 1.5
2. Տես Եկեղեցու Նախագահների ուսմունքները . Ջոզեֆ Սմիթ (2007), 419:
3. Հովհաննես 10.27
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 33 . 3, 6:
5. Տես Եսայիա 18 . 2:
6. Իսրայելի տան հավաքվելու վարդապետությունը Մորմոնի Գրքում ուսուցանված ամենավաղ դասերից է. «Եվ Իսրայելի տան ցովելուց հետո Նրանք նորից կհավաքվեն. . . . ձիթենու բնական ճյուղերը, կամ Իսրայելի տան մնացորդը, կպատվաստվի կամ կզա ճշմարիտ Մեսիայի՝ իրենց Տիրոջ և իրենց Քավի իմացությանը» (1 Նեփի 10 . 14).
7. Օրինակ, տես 3 Նեփի 5 . 23–26:
8. "Hope of Israel," *Hymns*, no. 259.

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՈՐԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2018 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. English approval: 11/17. Translation approval: 11/17. Translation of "Hope of Israel." Armenian. PD60005236 201